

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԾԵՍԸ

Ժ. Գ. ԳԱՐՈՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՃԻՇԵՑԻԻ ՔՈՎ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1960, ք. 11-12, էջ 273)

Յ. ԱՐՃԻՇԵՑԻԻ ՊԱՏԱՐԱԳԻ
ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԽՐԱՏԱԳԻՐՆԵՐԸ

Նախապէս տեսանք Յովհ. Արճիշեցիի կեանքը, դործերը և Ս. Պատարագի Մեկնութեան նպատակը եւ անոր ձեռագիրները: Արդ անցնինք մեր քննութեան դըլխաւոր մասը պարզելու, այսինքն երեւան հանելու Սուրբ Պատարագի արարողութեան կատարումը Հայաստանի մէջ, ըստ Ժ. Գ. դարու խորհրդատեւորներու:

Այս նպատակով քաղեցինք Պատարագի Մեկնութեան մէջէն բոլոր այն խրատագիրները, որոնք կրնան մեզի պատարագի արարողութեան ուրուագիծը լաւաւոր կերպով ցոյց տալ: Քաղեցինք, կ'ըսենք, որովհետեւ շատ անգամ խրատագիրները մեկնութեան հատուածներու մէջէն ստիպուեցանք առնել և միացնել միւս խրատագիրներուն, որոնք արդէն հրատարակութեան մէջ յայտնի նշանակուած էին իր խրատագիր, որպէսզի ամբողջացնէինք պատարագի արարողութեան դասագան մասերը*:

Նկատի առնելու ենք միշտ որ Յ. Արճիշեցի միայն մեկնութեան ուղղարձուցած է, եւ բացատրած է զխաւորապէս աղօթքներու պարունակած իմաստները. ուստի բուն արարողութեան, խրատագիրներու յօրինմամբ չէ դրադած: Ասոր համար միայն անկատար կերպով կարելի է տեսնել իր քով պատարագի արարողութիւնը, զոր նա ասելին անգին ցանաւ է, մեկնութեան մէջ:

Յետոյ անհնար է քանի մը յօդուածով կատարեալ կերպով պատկերացնել Յ. Արճիշեցիի տեսած եւ դործածած պատարագի խորհրդատեւորը, զոր միայն Ժ. Գ. դարու բովանդակ խորհրդատեւորներուն ուսումնասիրութիւնը կրնայ թոյլ տալ: Ասոր համար, դիտենք թէ համեստ պիտի ըլլայ մեր ուսումնասիրութեան եղբակցութիւնը, որուն զրգապատճառ եղած է Յ. Տաշեանի մէկ խորհրդածութիւնը՝ Վիեննայի մէջ դառնուած Արճիշեցիի ձեռագիրներու մասին. թէ «Ամբողջովին կարելի է վերակազմել Արճիշեցւոյն դործածած Պատարագամատոյցն, որ բնագրի կողմանէ ընդհանրապէս նոյն է սովորական օրինակին հետ. խրատագրոց մէջ հետաքրքրական տարբերութիւնք կը տեսնուին»: (Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց, Հար. Ա. Գիրք Բ. էջ 491):

«Հետաքրքրական» ըսելով ձեռագրական տարբերակները, անշուշտ կարեւոր տարբերակները հասկցած պիտի ըլլայ յարգոյ հեղինակը. մենք ալ այս անգամ միայն անոնք նշանակեցինք: Ընդհանրապէս հետեւեցանք Գաթրճեանի ոճին, աղօթքներու միայն սկզբնաւորութիւնը դրնելով. «բնագրաց... մանր մունր դրչական անձնութիւնք մի առ մի նշանակ-

*) Ստորեւ, մեր հրատարակութեան ընթացքին, բնագրին մէջէն մեր կողմէ հանած եւ միւս խրատագիրներու շարքին դրուած կտորները աստղանիշ ներկայացուցինք:

ուած չեն հոս, որ արդէն մեր նպատակէն դուրս էր: Միայն ուր... իրական եւ կարեւոր շեղումներ ունէին...» անոնց ուղղարձուցինք: Այսինքն՝ անկարեւոր համարեցանք բառային, քերականական, շարադրական այն տարբերակները՝ որոնք խրատագիրներու իմաստը չեն այլափոխեր: Աւելի ուշադիր եղանք այն տարբերակներուն, որոնք դրապէս բան մը կ'աւելցնէին կամ կը պակսեցնէին: Ապա թէ ոչ՝ մեր դրութիւնը չափէն աւելի պիտի երկարէր, առանց արդիւնքի հասնելու:

Ուստի, ծանօթութիւններու մէջ բերուած տարբերակները կը ծառայեն լրացնելու տպագրութեան օրինակը, խրատագիրներու տեսակէտով:

Անշուշտ յարմար պիտի ըլլար նշանակել այսօրուան պատարագին խրատագիրներուն տարբերակներն ալ, բայց լաւաւոր նկատեցինք զանց ընել եւ թողուլ որ իւրաքանչիւր մասնագէտ ինքնիր կողմէն կատարէ նման բաղդատական աշխատանքներ:

Չորս մասերու բաժնեցինք սուրբ պատարագը, եւ ամէն մէկ մասը զանազան դրոշմներու, առանց պակսեցնելու խրատագիրները:

Ա. ՄԱՍ. Պատրաստութիւն. - 1. Նախապատրաստութիւն: 2. Չգետաւորութիւն: 3. Պատրաստութիւն նուէրներու: 4. Ոնկարկութիւն:

Բ. ՄԱՍ. Երախաներու Պատարագ. - 1. Ժամամուտ, Շարական: 2. Ս. Աստը-

ւած: 3. Քարող, Ընթերցուած, Սաղմոս: 4. Աւետարան, Հաւատամք, Քարող: 5. Արտաքսում երախաներուն:

Գ. ՄԱՍ. Հաւատացեալներուն Պատարագ. - 1. Պատրաստութիւն Վերաբերում: 2. Վերաբերում: 3. Ձեռնյուշայ, Ողջոյն տուք: 4. (Հաւատամք), Քարող, Սուրբ սուրբ: 5. Առէք կերայք, Նուիրում: 6. Կոչում Հոգւոյն Սրբոյ: 7. Յիշատակութիւն Սուրբերու եւ Գոհութիւն: 8. Քարող, Հայր մեր: 9. Ի սրբութիւն սրբոց, Ի սուրբ Ի սուրբ:

Դ. ՄԱՍ. Գոհութիւն եւ վերջաւորութիւն. - 1. Պատրաստութիւն Հաղորդութեան: 2. Ծաշակում քահանային եւ Ժողովուրդին: 3. Գոհութեան երգ, Աղօթք: 4. Արձակման աղօթք, մասի բաշխում եւ Երգ:

Փակագծի մէջ առնուած էջերը 1830ի տպագրութեան էջերուն կը համապատասխանեն: Իսկ ծանօթութիւններու մէջի հանօթութիւնները ասոնք են.

Վեներաբիլի ձեռագիրներ. Կ = Թ. 735 (1715?): Վ = Թ. 1537 (1698?): Լ = Թ. 1533 (Ժէ դար): Ս = Թ. 387 (1679?): Գ = Թ. 389 (1713?): Յ = Թ. 373 (1742): Վիեննայի ձեռագիր. Ա = Թ. 174 (1675ին օրինակուած):

Հասկ - «Հասկ» ամսագրերին մէջ հրատարակուած Փառէն Եպ. Կն, 1950, Թ. 4-5 (1860 էջմիածնի հրատարակութիւն):

*) «Հասկ»ի յօդուածագիրը, Փառէն Եպիսկոպոս, հրատարակելով Բաղդատական Պատկեր Հայկական Չորս Պատարագամատոյցներու, վարանած է ինքն ալ զարմանք յայտնելու եւ նոյն իսկ պատարակելու ձեռագիրներ օրինակողներու անհաւատարմութիւնը եւ հրատարակիչներուն անձնութիւնը:

«Կենթագրերը թէ՛ այս (Որոյ... արացես...) եւ նման սխալներ՝ զրգադրական այլալուծ կամ տպագրական վրիպակ ըլլալէ աւելի, վերագրելի են հրատարակիչներու տգիտութեան եւ միամիտ սրբագրութեան (!): - Ասոնք կարծելով թէ արդի խորհրդատեւորին աղաւաղեալ եւ խեղաթիւրուած բառերն ու ձեւերն են ուղիղ (?) վերջնական բնա-

գրին համաձայն սրբագրելով տպագրելու զանոնք՝ կը պահեն եւ կը յաւերժացնեն սխալները, խորհելով միամտօրէն թէ բնագրին մէջ ալ այսպէս ըլլալու էին... (!?):» (Ծան. Զարմացական նշանները հեղինակին են):

Շահեկան անդրադարձութիւններ ալ կատարած է Փառէն Եպիսկոպոս՝ քահանային տառնաձեւական խոստովանութեան, կիսատարկաւազի աստիճանին նորամուտ ըլլալուն, խորհուրդ խորին նորութեան մասին, եւ հուսկ լեզուական մի քանի ստուգարանութիւններ (անդ, էջ 225-226. տե'ս նաեւ անդ, էջ 41):

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

1. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

1 * Յորժամ հանդերձեալ ոք իցէ ի քահանայապետից եւ կամ ի քահանայից պատարաւ առնել, նախ պարտ է զգոյշ լինիլ յամենայն տեսակէ մեղաց... երթիցէ նախ առ իւր խոստովանահայրն, ի ծունկս անկեալ, բացաւ զլիտով, եւ խոստովանեցի զամենայն յանցանս իւր՝ զդորժոցն, զբանիցն եւ զխորհրդոցն (էջ 20-21):

2. ԶԳԵՍՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ, ԱՂՕԹՔ

* Եւ ի պատրաստել սարկաւաղացն զհաց պատարաղին, մտցեն յաւանդատունն՝ ուր զընտ պատարաղին իցէ, եւ զընցցին զընտ ըստ իւրաքանչիւր աստիճանի եւ պատուոյ:

10 * Զընտ պատրիարդին, որ թարգմանի հարանց հայր, եւ կաթուղիկոսին եւ արքեպիսկոպոսին՝ է պատմուծան եւ նախորտ բաղմախաչ, եւ եմիփորոն ի վերայ այնորիկ՝ հինգ խաչիւք զարդարեալ, եւ խոյր ի գլուխն: Իսկ եպիսկոպոսին՝ որ թարգմանի տեսուչ՝ նախորտ առանց խաչի, եւ եմիփորոն: Եւ քահանայն պատմուծան եւ նախորտ զընցցի, որպէս եւ եպիսկոպոսն. բայց ուրար արկցէ զերկու ուսովն, եւ ոչ եմիփորոն: Եւ սարկաւաղն պատմուծան միայն զընցցի, առանց դօտւոյ. եւ ուրար՝ զահեակ ուսովն: Իսկ կիսասարկաւաղն նոյնպէս պատմուծան դօտելոյժ զընցցի. բայց զուրարն ի վերայ բազկին արկցէ եւ ոչ զուսովն: Եւ զսարկաւաղացն պատմուծան դօտելոյժ զընցցին միայն. եւ բացաւ զլիտով կացցեն ամենեքեան ի սուրբ խորհրդեանն (էջ 21):

20 * Եւ ի զընուլ հանդերձին՝ ասեն սաղմոս ըստ խորհրդոյն. Յիշեա Տէր գիաւիթ... (էջ 27):

Իսկ սարկաւաղն... հրաման տայ ժողովրդեանն ասելով... Խընդրեցուք... (էջ 28):

1 1830ի հրատարակութեան մէջ կայ հետեւեալ խորագիրը. «Յորհուրդ զանազան զգեստուց»:

«Յորհուրդ զանազանութեան զգեստուց» կէ:

«Յորհուրդ զանազանութեան զգեստուց քահանայական աստիճանաց թէ որպէս են» վ:

«Յորհուրդ զանազան զգեստուց Յովհաննու, Ներսէսի, Խոսրովու (լուսանցքին վրայ) Ս. (վերահագրին տակը) Գ: ի Յովհաննէ Յ:»

1-5 Բոլոր ձեռագիրները ունին այս հտուածը, քիչ չեղումներով: > Ա:

իցէ] է Կ: ~ իցէ ոք ի քահանայից եւ կամ եպիսկոպոսաց մատուցանել պատարաւ վ: > եւ կամ ի քահանայից Գ: > եւ ԿԱՅ:

2 + լինել քահանային ՍԳԵ: Լինել Կ: > տեսա-

կէ ԿՎ: ~ պարտ է յամենայն մեղաց պատրաստ լինել վ:

3 երթիցէ] երթայ ՍԳ: Երթա Յ:

3-4 + եւ ի ծունկս անկանի առաջի նորտ բացաղուի եւ խոստովանի հաւատով զամենայն յանցանս իւր Կ:

4 > եւ ՍԳԵ: + բացեալ զլիտով եւ խոստովանել արտասուով եւ հաւատով վ:

5 զորժոց, բանից ՍԳԵ:

20-21 > ՍԳԵ: Այս երեք ձեռագիրները ունին. Զի՞նչ յայտ առնէ քահանայիցն համդերձ սարկաւաղոքն յաւանդատունն պայծառագոյսով: Մեկնութիւն սաղմոսին որ մայս քան զգեմուլն: Ժողովրդեանն] ամենեցուն ՍԳԵ:

* Իսկ եղբարցն ծանուցեալ է թէ զայս արժան է խնդրել... կցորդին եւ ինքեանք վարդապետին բանից, եւ զնոյն երկրորդեն ասելով. Կեցո Տէր (էջ 29):

Քահանայն միարանի աղօթից նոցա. եւ ընտանեբար խօսի ընդ Քրիստոսի ասելով. Որ զգեցեալ ես... (էջ 30):

30 Եւ յետ զընելոյն՝ զայ առաջի սրբոյ սեղանոյն, եւ արկեալ ի վերայ երեսացն՝ ասէ զաղօթս առ սուրբ Հոգին, զոր ասացեալ է սուրբ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ, արտասուօք... Ամենակալ Աստուած... (էջ 32-33) ... մմա փառք... յաւիտեմից: Դարձեալ կրկնեցի ի նոյն կարգ բանի, մինչեւ վստահութիւն վերահայեցողութեանն լուսոյ հրաշապէս աղղեալ յայտնեցի՝ աւետարանել վերստին կրկին խաղաղութիւն (էջ 36)... Ապաշեմք եւ աղերսեմք... (էջ 36-37):

3. ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՆՈՒԷՐՆԵՐՈՒՆ

Քահանայն զայ առնթեր ընծայարանի խորանին, առ որ մատուցանէ նախասարկաւաղն զնշխարն. եւ առեալ քահանայն՝ զնէ ի մաղղմայն ասելով. Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

40 Եւ առեալ զընին՝ արկանէ ի սկիհն ասելով. Յաղագս յիշատակի փրկ. (էջ 40): Եւ քահանայն ասէ ի ծածուկ զաղօթս Յովհաննու Ոսկեբերանին. Տէր Աստուած մեր՝ որ գերկնաւոր հացդ (էջ 41):

Եւ ապա մատուցեալ սարկաւաղն՝ ծածկէ զաստառակաւ. ասելով սաղմոս. Տէր քաղաւքեաց զվայելչութիւն... (էջ 42):

4. ԽՆԿԱՐԿՈՒԹԻՒՆ

45 Եւ տայ խունի ի ձեռս քահանային՝ առնթեր կալով նորա (էջ 42): Աղօթք. Խունի մատուցանեմք (էջ 45):

Եւ ապա քահանայն իջանէ նոքօք հանդերձ ի մէջ եկեղեցւոյն. եւ

24 + զայս արժան է խնդրել յԱստուծոյ ՍԳԵ:

25 բանին Գ: երկրորդեալ ՍԳԵ:

26 + Ժողովուրդն. Կեցո Տէր եւ ողորմեա Կ: + Սարկաւաղն. Ողորմեաց ԿՎԼԱ: + Ժողովուրդն. Գ. Տէր ողորմեա ԿԱ: Տէր ողորմեա ՎԼ:

27 միարան աղօթից նոցա եւ] մինչ մոգայ բարձրաձայն աղօթեմ ընտանեբար ՍԳ:

~ մինչ նոքա աղօթեն, քահանայն ընտանեբար եւ խորհրդապէս խօսի ընդ Քրիստոսի ասելով. Յ:

29 արկեալ ի վերայ երեսացն] առաջի սեղանոյն ի ծունի իջեալ վ:

35 + աղերսեմք... ի ձայն. Զի քն է գրութիւն... Կ:

36 + Ապա քահանայն յարուցեալ զայ Կ: Խորանին] սեղանոյն ԿՎԱ: > խորանին Լ:

38 + ասելով Սարկաւաղ. Եւ եւս խաղաղութեան... ՀԱՍԿ:

40 > ի ծածուկ ԿՎԼԱՍԳԵ:

41 Տէր Աստուած մեր] Աստուած Աստուած մեր ՎԱՍԳԵ:

43 + Քահանայ. Տէր թաղաւորեաց... Սարկ. Հաստատեաց... Քն. Փառք Հօր: Սարկ. Այժմ եւ միշտ... եւ օրհնեա Տէր: Քն. Հոգին սուրբ եկեցէ: Սարկ. Եւ եյս խաղաղութեամբ... ՀԱՍԿ:

45 Սարկ. (°) Խունի մատուցանեմք ԼԱ: Մատուցանեմ Կ:

46-49 > ԿՎԱ: Յետ այսորիկ կատարիչ խորհրդոյն զայ հանդերձ քահանայիւք (քահանայիւքն Ա): Եւ սարկաւաղօքն եւ դպրօքն (+ մամեղիմօք լուցելով Ա) մտանէ առաջի սրբոյ սեղանոյն եւ կանդնեալ ասէ զաղօթս զայս արտասուօք (> արտասուօք Ա) ԿԱ:

Լ ձեռագիրը հետեւեալ կարգն ունի. 1) Մտանեն առաջի սրբոյ սեղանոյ. Սաղմոս՝ Մտից առաջի սեղանոյ: Եւ քահանայն երկրորդապէս սուրբ սեղանոյն եւ ասէ զաղօթս զայս. Տէր Աստուած որ կարդեցեր: 2) Եւ ապա մատուցանէ ծարկաւաղն խունի քահանային. առնու եւ ասէ զաղօթս խնիցն. Ինքն խնկարկէ շուրջ զսեղանովն, առաջի նորա ունելով կիսասարկաւաղն զմոմեղէնս եւ զինի սարկաւաղին ըղ-

ծխել ամենայն լրման եկեղեցւոյն մինչեւ ցյետին ժողովուրդն. եւ պաշտօնեայքն ասեն շարական խնկոցն, մինչեւ քահանայն դառնայ ի խորանն (էջ 46):

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ԵՐԱՆԱՆԵՐՈՒ ՊԱՏԱՐԱԳԸ

1. ԺԱՄԱՄՈՒՏ, ՇԱՐԱԿԱՆ

- 50 Եւ ապա իջանէ սարկաւազն ի մէջ եկեղեցւոյն. եւ ձայնէ ի խորանն ասելով Օրհնեա Տէր:
- Եւ քահանայն ասէ. Օրհնեալ քաղաքութիւն... (էջ 48):
- Եւ ապա ժամամուտ ըստ աւուր խորհրդոյն:
- Եւ ի կատարին՝ քարոզէ սարկաւազն. եւ եւս խաղաղութեան... (էջ 49):
- 55 Եւ քահանայն ասէ զաղօթս զայս. Տէր Աստուած մեր որոյ կառուցութիւնդ (էջ 49):
- Եւ զկնի սորին՝ ասեն սաղմոս եւ շարական ըստ աւուր խորհրդոյն:
- Եւ քահանային սակաւ ինչ ի բացեալ կացեալ ի սեղանոյն՝ ասէ ի ծածուկ զաղօթս. Տէր Աստուած մեր, կեցո... Խաղաղութիւն ամենեցուն ... Որ հասարակաց զայս եւ միաձայն... (էջ 50-51):
- 60

2. «ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ»

- Եւ ի միջի տան շարականին երթեալ առաջի բեմին՝ երկիր պաշանէ երկցս. եւ քահանայն ասէ զաղօթս զայս. Տէր Աստուած մեր, որ կարգեցեր ... ի ձայն՝ Զի քո է կարողութիւն եւ զօրութիւն...:
- Եւ համբուրեն զսեղանն. եւ յաւարտման շարականին զոչեսցէ սարկաւազն բարձր ձայնիւ. Պոստիւմէ. եւ բարձրացուցանեն զաւետարանն սուրբ. եւ ժողովուրդքն երգեն ձայնիւ զերեքսրբեանն ասելով. Սուրբ Աստուած... (էջ 52-53):
- Եւ կցորդի քահանայն ժողովուրդեանն սրբասացութեան աշուտ աղօթիւքս՝ զոր ասէ յորժամ երգեն զՍուրբ Աստուածն. Աստուած Սուրբ...
- 70 ... (էջ 55):

խնկոցն: 3) Եւ ապա քահանայն իջանէ նորքի ի մէջ եկեղեցւոյն եւ ծխել ամենի լրման մինչեւ ցյետին ժողովուրդն: Եւ պաշտօնեայքն ասեն շարական խնկոցն: Եւ քահանայն դառնայ ի խորանն:

49 + երկրպագէ երկցս ՀԱՍԿ:

50 + խորանն առ քահանայն ԿԼԱՍԳ:

51 > ասելով ԿԼԱՍԳ:

52 + Օրհնեալ քաղաքութիւն... ժող. Ամէն (մեկնութեան մէջ) ՍԳԶ:

53-54 + Ըստ պատշաճի աւուրն, ըստ խորհրդոյ եւ քարոզէ սարկաւազն. եւ եւս խաղաղութեան... Օրհնեա Տէր. եւ քահանայն ասէ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ եւ Խաղաղութիւն ամենեցուն ՍԳ: Եւ քահանայն ասէ. Օրհնութիւն եւ փառք... Խաղաղութիւն ամենեցուն Յ:

55 + ի ձայն Տէր Աստուած մեր ՍԳ:

56 + կարողութիւնդ... Դպ. Ամէն ՀԱՍԿ:

57 > սաղմոս ԿԼ: Ըստ պատշաճի աւուրն ՍԳԶ: խորհրդեան ԿԼԱ: Ըստ աւուր խորհրդոյն ըստ պատշաճի ԿԼ: Ամբիջապէս կը կցուի. եւ ի կատարման՝ բարձր ձայնէ սարկաւազն. Պոստիւմէն ԿԼԱԼԱ:

58-62 > Եւ քահանայն սակաւիկ ինչ... զայս ԿԼԱԼԱ:

61 + շարականին կամ ի փառս տալն ՍԳ: Բեմին] սեղանոյն երկրպագէ ՍԳ:

62 > երկցս ՍԳ:

63 > ի ձայն ԿԼԱԼԱ:

64 Եւ համբուրեն զսեղանն ԿԼԱՍԳԶ:

65 բարձրացուցանէ ԿԼԱՍԳԶ: + աւետարանն ըստ բանի [ն] ԿԼԱՍԳ:

66 երգեն] ասեն ԿԼԱՍԳ (մեկնութեան մէջ) երգեն ԿԼ. երգէ Ա:

3. ՔԱՐՈԶ, ԸՆԹԵՐՑՈՒԱԾ

- Եւ կատարին աղօթքն եւ երեքսրբեանն ի միասին. եւ սարկաւազն քարոզէ. եւ եւս խաղաղութեան գտէր աղաչեցումք:
- Ժողովուրդքն. Տէր ողորմեա: Վասն խաղաղութեան... (էջ 57):
- Եւ մինչ սարկաւազն երգեն զքարոզն, քահանայն ասէ ի ծածուկ զաղօթս զայս. Տէր Աստուած մեր՝ զբազկատարած զաղաչանս...:
- 55 Յետ աշտորիկ երկրպագէ սեղանոյն քահանայն. եւ եկեալ բազմի յաթոն. եւ սարկաւազն տայ ի ձեռս նորա զաւետարանն: Եւ զարձեալ խոնարհի ի ծռնկա նորա եւ առնու (էջ 60):
- Եւ զկնի սորին՝ սաղմոսերգուն երգէ զսաղմոսն. եւ ընթերցոյն ընթերցուն նախ զմարդարէականն. եւ ապա զառաքելականն (էջ 61):
- 80 Եւ յետ ընթերցումոյ՝ զայ զարձեալ սաղմոսերգուն յառաջ. եւ սկսանի արելուիայ:
- Եւ ի նմանէ առնու ամենայն եկեղեցին եւ երկրորդէ զնոյն եղա՛նակաւ զարելուիայն:
- 85 Եւ սկսանի սաղմոսերգուն զսաղմոսն, առանց եղանակի, մինչեւ յաւարտ փոխին:
- Եւ եկեղեցին երկրորդէ զնոյն նախասաց արելուիայն (էջ 62):

4. ԱԻԵՏԱՐԱՆ, ՀԱԻԱՏԱՄՔ, ՔԱՐՈԶ

- Յայնժամ սարկաւազն առեալ զաւետարանն, խնկօք եւ մոմեղինօք, յետ արելուիային, զայ ի դռնն բեմին. եւ ի կատարումն արելուիային, ձայնէ բարձր. Որքիւ:
- 90 Եւ քահանայն դառնայ ի խորանն աս ժողովուրդն եւ խաչակնքէ ասելով. Խաղաղութիւն ընդ ամենեւեմ:
- * Եւ ժողովուրդքն. եւ ընդ հոգւոյդ քու:
- * Սարկաւազն. երկիրաճութեամբ լուարուք (էջ 63):
- 95 * Եւ քահանայն կամ սարկաւազն. Սրբոյ Աւետարանիս որ ըստ...
- * Ժողովուրդքն. Փառք Քեզ, Տէր Աստուած մեր:
- * Սարկաւազն. Պոստիւմէ:
- Եւ ընթերցուն զաւետարանն (էջ 64):
- * Ժողովուրդքն. Փառք Քեզ, Աստուած: Եւ ապա ասեն զնիկիականն զաւանուածն ի լրման (էջ 65):
- 100

73 ժող] Դպ. ՀԱՍԿ:

75 + ի ձայն Զի ողորմած... ԿԳԶ:

76 > երկրպագէ սեղանոյն ԿԼ: + Եւ երթայ բազմի յաթոն աստիճանի Կ:

76-78 > Յետ աշտորիկ... առնու ՍԳԶ:

78 + Եւ առնու զաւետարանն՝ քահանայէն, եւ նստեալ կարգայ գաւուր պատշաճն ըստ խորհրդոյն աւուրն Կ:

79 սաղմոսերգուն երգեն ԼԱ: երգէ] ասել... ՍԳ:

79-87 > Յ:

81-82 > Կ: + Եւ յետ ընթերցոյն սաղմոս փոխն, զնախասացեալ արելուիայ քարոզն եղանակաւ. Լ: Եւ զկնի զքեզն ասեն արելուիայ Յ:

82 + Եւ սկսանի արելով. Կ. ասել ԱՍԳ:

83 եկեղեցին] եկեղեցականք ՍԳ:

85 զսաղմոսն] սաղմոսափոխն ԿԼԱ: զփոխն Կ: զսաղմոս փոխն ՍԳ:

88 > խնկօք Լ:

88-90 > Յ:

89 ~ ի դռնն խորանն որ է յառջեւ բեմին Կ:

90 ձայնէ բարձր] բարձր բարբառով Լ:

92 ընդ ամենեւեմն] ամենեցուն ԿՍԳԶ:

95 > կամ սարկաւազն ԿԼԱՍԳԶ:

96 + ժողովուրդքն ասեն զողալով Կ: > Տէր ՎԱ:

98 + Սարկաւազն ընթերցուն զաւետարանն ԿՍԳԶ:

99 + քեզ Տէր Աստուած մեր ԿԼԱՍԳԶ: ՀԱՍԿ չորս անգամ զարելուիայ քարոզն Կ ժողովուրդին անգը. ունի նաեւ Ասէ Աստուած եւ փառք քեզ Տէր Աստուած:

Յետ այսորիկ [քահանայն] զայ առաջի սեղանոյն: Եթէ եպիսկոպոս իցէ, ի բաց հանէ զեմփորոնն. եւ ինքն կայ առաջի սեղանոյն. եւ քահանայքն զաս զաս կան զինի եպիսկոպոսին, ի մի եղերէ բեմին մինչեւ ի միւսն:

105 Եւ սարկաւազն քարոզէ առ դրան. եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեցուի... (էջ 69-70):

* Եւ ժողովուրդն Տէր ողորմեա: Եւ եւս հաւատով աղաչեցուի... (էջ 70):

5. ԱՐՏԱՔՍՈՒՄ ԵՐԱԽԱՆԵՐՈՒՆ

110 (Աղօթք քահանայի) Տէր մեր եւ փրկիչ... Որպէս զի արժ... Այժմ եւ... ժողովուրդն Ամէն (էջ 72-74):

Քահանայն խաղաղութիւն տայ ժողովրդեան:

Եւ նոքա [ժողովուրդ] եւ ընդ հոգւոյդ բում:

Սարկաւազն՝ Աստուծոյ երկրպագեցուի:

Ժողովուրդն՝ Առաջի բո Տէր:

115 * Դարձեալ յաւելու յաղօթս իւր քահանայն եւ ասէ. Խաղաղութեամբ բով... (էջ 74):

Ժողովուրդն. Ամէն:

Քահանայն. Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Ժողովուրդն. Ամէն:

120 Սարկաւազն. Օրհնեալ Տէր:

Եւ քահանայն զառնայ առ ժողովուրդն, եւ հրաման տայ երախայիցն ելանել ասելով. Տէր Աստուած օրհնեցէ զամենեսեանդ:

Եւ սարկաւազն ձայնէ բարձր բարբառով. Որ երախայիդ է՛ք՝ ելէ՛ք, Որ երախայիդ է՛ք՝ ելէ՛ք, զի մի՛ ոք յերախայից...

125 * Յետ այսորիկ արտաքս հանեն նախ զերախայսն... եւ ապա զաղաչխարոյսն... եւ զինի նոցա զանմաքուրսն (էջ 75):

Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ

ՀԱՒԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ ՊԱՏԱՐԱԳԸ

1. ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԻ

Եւ զպիրքն արժանացելոցն երդեն. Մարմին տէրունական...

Եւ սարկաւազն ասեն. Սաղմոս ասացէ՛ք...

* Եւ ապա սրբապատգովին (էջ 76):

- 101 + քահանայն կ՛ըզ. Դայ] կայ Վ:
102 + զպատուական եմփորոն եւ զմատնին գորգեցեալ էր ի ձեռնադրութեան ՍԳ:
103 կան զինի] զան յետ նմին Կ:
105 առ դուռն ԿԼԱ:
109 + ի ձայն Որպէս զի արժ... Կ: > Ամէն Կ:
117 > Ամէն ԿԼ:
118 + ժողովեալ ամենայն քահանայքն ասեն. Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս Վ:
119 > Ամէն ԿԼ:

- 122 + ելանել յեկեղեցւոյն. Որ երախայ է՛ք՝ երթա՛ք Վ: Ձեռապիրքերը հին հետեւիւր աղօթքներու կարգին մինչեւ Սաղմոս ասացէ՛ք:
125 Յ ձեռապիրք երախաներու արտաքսումը կը ստատրկաւազներուն դորձը կը համարի:
127 Դպիրքն] ժողովուրդն ԼԱ: > Կ: Եւ Դպիրքն ՎԱ:
129 Եւ ապա ասի սրբապատգովին] իսկ զպիրքն երգ. Որք զքերքէ Լ:

2. ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

130 * Եւ զան սարկաւազունքն ի սարկաւազատունն. եւ երդեն զՅարեուէհարն եւ Որք զքերովքիցն խնկօք եւ մոմեղինօք (էջ 77):

Եւ մինչ նոքա զայս երդեն, սարկաւազունքն զդուռնութեամբ բերեն զնուէրսն առ քահանայն:

135 * Եւ քահանայն խոնարհեալ ասէ զաղօթս զայս ի ծածուկ, որպէսզի աղօթքն եւ Որք զքերովքիցն ի միասին վճարեցին: Խոնարհեցուցանէ զպարանոցն, եւ զմիտս ընդ ձեռացն յերկինս ամբառնայ առ քահանայապետն Քրիստոս եւ աղօթէ ասելով. Ոչ ոք արժանի է... (էջ 79):

3. ՁԵՌՆԼՈՒԱՅ, «ՈՂՋՈՅՆ ՏՈՒՔ»

Եւ բերէ սարկաւազն ջուր առ ի լուանալ քահանային զծայր մատանցն առաջի ս. սեղանոյն: Քարոզ եւ եւս հաւատով... (էջ 82-89):

140 Աղօթք. Տէր Աստուած զօրութեանց...: Քարոզ Ողջոյն տուի (էջ 90-92):

4. (ՀԱՒԱՏԱՄՔ), ՔԱՐՈՋ, «ՍՈՒՐԲ ՍՈՒՐԲ»

[Ընդէ՞ք յետ այսորիկ զաչն հաւատոյն երդի ի յեկեղեցւոյն]: Եւ ողջունէ սարկաւազն նախ զսեղանն, եւ ապա զմիմեանս. եւ զպիրքն երդեն ասելով. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ... (էջ 92):

Սարկաւազն ասէ. Ահիւ կացցուի, երկիւղիւ կացցուի... Պատարագ Քրիստոս մատչի... (էջ 94):

145 Քահանայն զառնայ առ ժողովուրդն եւ ասէ. Շնորհք սէր...

Դպիրքն. Եւ ընդ հոգւոյդ բում (էջ 95):

Սարկաւազն. Չորունս զորունս... ի վեր ընծայեցուցէ՛ք...

Դպիրքն. Ունիւմք առ քեզ, Տէր ամենակալ:

150 Սարկաւազն. Եւ գոհացարուի... (էջ 96):

Դպիրքն. Արժան եւ իրաւ (էջ 96-97):

* Բայց այժմ քահանայն... ասէ. Արժան է ստուգապէս... (էջ 97-98):

* Չոր լուեալ ժողովրդեան զայսպիսի աղբումն բանի... աղաղակեն բարձր ձայնիւ առ Քրիստոս այսպէս. Սուրբ, սուրբ, սուրբ... (էջ 100):

130 Սարկաւազն Կ: > Վ: Սարկաւազատունն] սրբապատգով Կ: > Յարեուէ հճար ԿԼԱ:

136 զմիտս եւ զձեռն յերկինս համբառնայ ԿԼ: ~ համբառնայ քահանայապետն առ Քրիստոս Լ:

138-139 զծայրս մատանցն Կ: զծայր մատին Վ: զծայրս մատին Լ: զծայրս Ա: ՀԱՍԿ չունի ձեռնիւրայ:

140 + Տէր Աստուած զօրութեանց... ի ձայն. Շնորհք... Խաղաղութիւն ամ. ԿԼ:

141 երդեն յեկեղեցւոյն Կ: յեկեղեցին Վ: > ԼԱ:

142 Եւ ողջունեն զմիմեանս եւ նախ զսեղան Ա: զմիմեանս] զքահանայն Կ: > Վ:

143 + Քրիստոս ի մէջ... Չորունս... ԿԼԱՍԳ: > Քրիստոս ի մէջ Վ:

144 + Ահիւ կացուր... ժող. Առ քեզ Աստուած

ԱՎՅ: ժող.] Դպ. ԿԼ: Ահիւ... Պատարագ... ՍԳ:

144-145 + Պատարագ Քրիստոս... ժող. Ողորմ. մութիւն ԱՎ: ժող.] Դպ. Ողորմ. ԿԼ:

147 Դպ.] ժողովուրդ ԿԼԱՎԱ:] ի մերձ կացելոց՝ ի հոգւոյդ բում ՍԳ:

+ Եւ ընդ հոգւոյդ բում, ի վեր ընծ... ԿԼԱՍԳ:

148 > (աստ) Չորունս... ԿԼԱՍԳ: > Յ:

149 Դպ.] ժող. ԿԼԱՍԳ: Դպ(իւր)ն. Ունիմք... Լ:

151 Դպ.] ժողով. ԿԼԱՍԳ:

152 + ի ձայն. Եւ ընդ սերովքս Կ: > Վ:

153 + աղաղակեն առ Քրիստոս քահանայքն եւ ժողովուրդքն եւ զպիրքն Կ: > Վ: ժողովուրդ] եկեղեցին ՍԳ: > Յ:

5. «ԱՌԷՔ ԿԵՐԱՅՔ», ՆՈՒԻՐՈՒՄ

- 155 Բաճանայն բազկատարած ասէ... Սուրբ, սուրբ, սուրբ եւ ճշմարտապէս... եկեալ կամաւ ի խաչ: Առեալ զհացն... Առէք... Արքէք...: Եւ զտոյն... կենդանեաց եւ մեռելոց:
- Եւ առնու զընծայսն ի ձեռն և ասէ. Եւ արդ մեք Տէր... խոստովանիմք եւ օրհնեմք (էջ 100-105):
- 160 Եւ եղեալ զընծայսն ի վերայ սեղանոյն եւ ասէ. Եւ զքոյս ի քոյս... (էջ 107):
- * Ժողովուրդն երգեն ասելով. Յամենայնի օրհնեալ եւ Տէր... Բաճանայն բազկատարած ասէ. Զքեզ արդարեւ Տէր Աստուած մեր... (էջ 107) ... որում վայել է... հաղաղութիւն ամենեցուն:
- 165 * Ժողովուրդն. Եւ ընդ հոգւոյդ քում:
- * Սարկաւաղն. Աստուծոյ երկրպագեսցուք:
- * Ժողովուրդն. Առաջի քո Տէր (էջ 108):

6. ԿՈԶՈՒՄ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՑ

- Բաճանայն խոնարհեալ երկիր պաղանէ սեղանոյն եւ ասէ. Երկիր պաղանեմք... (էջ 109-110):
- 170 Եւ քաճանայն խաչակնքէ զընծայսն և ասէ. Որով զհացս օրհնեալ... Սարկաւաղն՝ Ամէն (էջ 110):
- * (Բաճանայն) Որպէս զի եղիցի... Սովաւ շնորհեա... (էջ 111-6):

7. ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ, ԳՈՀՈՒԹԻՒՆ

- Բաճանայն ասէ. Աստուածածնիմ... (էջ 117):
- * Սարկաւաղն զայ յաջակողմն սեղանոյն խնկարկելով չուրջ զսեղանոյն. Եւ ուղղէ զդէմս ի պատարալի. Եւ ասէ բարձր բանիւ ի լուր ժողովրդեան. Առաջից սրբոց... Եւ այլն ըստ կարգին:
- * Իսկ ժողովուրդն կցորդին բանի սարկաւաղին ասելով. Յիշեա, Տէր, եւ ողորմեա (էջ 118):
- Եւ քաճանայն կրկնաբանէ զբանս նոցին ասելով. Յիշեա, Տէր, եւ ողորմեա... Եւս առաւել զեպիսկապոսապետն մեր... վարդապետութեամբ (էջ 119):
- 180

- * Իսկ սարկաւաղն ի սկսանիւ քաճանային զաղօթն, խորհրդաբար զայ զարձեալ ի նոյն առաջին տեղին իւր առ աջակողմն քաճանային եւ սկսանի ասել. Գոհուրիւն... սրբոյ սեղանոյս եւայլն ըստ կարգին (էջ 120):
- 185 Եւ քաճանայն ասէ զաղօթն զայս. Յիշեա, Տէր, եւ ողորմեա... Եւ եղիցի... ամենեսեանդ (էջ 120-123):
- Դպիրքն. Եւ ընդ հոգւոյդ քում (էջ 123):

8. ՔԱՐՈԶ, «ՀԱՅՐ ՄԵՐ»

- Քարոզէ սարկաւաղն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
- 190 * Ժողովուրդն. Տէր ողորմեա:
- * (Սարկաւաղն). Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք... վասն մատուցեալ... Որպէսզի Տէր Աստուած... Եւ անդէն ընդ քարոզութեանն՝ քաճանայն խորհրդաբար աղօթէ. Աստուած ճշմարտութեան... Եւ տուր մեզ... ասել (էջ 125-126):
- 195 Եւ դպիրքն բազկատարած եղանակին. Հայր մեր որ յերկինս... այլ փրկեա՛ ի չարէն (էջ 126-128):
- Աղօթք (քաճանային). Տէր տերանց Աստուած... հաղաղութիւն ամենեցուն (էջ 128-129):
- * Ժողովուրդն. Եւ ընդ հոգւոյդ քում:
- 200 * Սարկաւաղն. Աստուծոյ երկրպագեսցուք:
- * Ժողովուրդն. Առաջի քո, Տէր (էջ 129):
- * Եւ քաճանայն խոնարհեցուցեալ զգլուխն իւր նման ժողովրդեանն՝ աղօթէ առ հողին սուրբ... Որ աղբիւրդ եւ... (էջ 129-130):

9. «Ի ՍՐԲՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ» – «Ի ՍՈՒՐԲ Ի ՍՈՒՐԲ»

- Եւ քաճանայն առնու զսուրբ հացն ի ձեռն:
- 205 Եւ սարկաւաղն ձայնէ բարձր. Պոսլխումէ:
- Եւ քաճանայն վերացուցանէ զընծայն ի վեր քան զգլուխն եւ ասէ. Ի սրբութիւն սրբոց (էջ 131):
- Եւ ժողովուրդն միաձայն աղաղակեն. Միայն սուրբ... ամէն:
- Քաճանայն ունեւով զնոյն յերկուսին ձեռին, ասէ. Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ:
- 210 * Ժողովուրդն. Ամէն:
- * [Քաճանայն]. Օրհնեալ Որդիդ սուրբ...

- 155 > Բազկատարած ԿՎԼԱՍԳԵ:
- 157 Եւ զտոյն] Որ զտոյն ՍԳԵ:
- 158 + ի ձեռն եւ աղօթէ ի ցած Կ: > Վ:
- 160 Եղեալ] Դնէ Կ:
- 162 + Դպիրքն երգեն ասելով հանդերձ ժողովուրդիւ Վ:
- 163 ասէ] աղօթէ ի ծածուկ Կ: > Վ:
- 167 Ժող.] Դպիրքն Կ:
- 170 > խաչակնքէ Լ: > Եւ քաճանայն... ասէ ՍԳԵ: + ասելով ի ցած. Կ: > Վ: + Գ Գ անգամ ասա Կ: զհացս ✕ օրհնեալ ✕ ... Եւ զրաժակս ✕ ... Ս: զհաց ✕ ... Եւ զրաժակս ✕ ... Եւ զրաժակս ✕ ... Գ: > ✕ Ե:
- 172 + Եւ քաճանայն այնուհետեւ ոչ բարձրագոյն

- այլ խոնարհագոյն քան զընծայսն տարածեալ զձեռնսն աղօթէ ի ծածուկ. Որպէսզի... Կ: > Վ: Եւ ապա քաճանայն համբուրէ զսեղանն եւ այնուհետեւ զձեռն ցած հաւասար մութիւնով խոնարհէ եւ զայն ի նոյն խորհուրդ առեալ ասէ ամառունց զաղօթս Կ: > ցած, զաչան Լ: > ցած ՍԳ: յառեալ Ս:
- 173-88 Զեռապիրները պատարալի աղօթքներու եւ տեստաւորութիւններ ունին, բայց կարեւոր տարրերակներ չունին խրատապիրներու տեսակետով: «... իւր էտեւն պիտի. այս տոգս զրաժ գտայ եւս, այլ նոյնպէս զրեցի, ով եղբայր» Կ:

- 187 + ամենեսեանդ: Դառնայ խաչակնքէ ի վերայ ժողովրդեանն Կ:
- 188 Դպիրքն] ժողովուրդին Կ: Ժողովուրդն Լ: > ՍԳԵ:
- 189 Եւս... Աստուած ճշմարտութեան, ապա բարոյ Կ:
- 195-196 + Եւ ժողովուրդն տարածեալ զձեռնս բարձր եւ քաճանայն ի ծածուկ ԼԱ: Ապա՝ Տէր տերանց ԼԱ: Եւ մինչ նոքա երգէ՝ զՀայր մեր որ յերկինս, քաճանայն աղօթէ ի ծածուկ՝ Տէր տերանց... ի ձայն Զի քո է արքայութիւն... Կ:

- 201 Ժողովուրդն] դպիրք Կ: > Վ:
- 202 Խոնարհի քաճանայն եւ ամենայն ժողովուրդն խոնարհին ի վայր Կ:
- 203 + աղօթէ ի ծածուկ Կ:
- 204 > ԿԼԱ:
- 208 միարան եւ ասեն հանդերձ դպրօքն Կ: Միայն Դպիրք ՀԱՍԿ: Դպիրքն միայն աղաղակեն եւ ասեն Ս: աղաղակեն ասելով Գ: աղաղակեն Ե: ժողովուրդն] Դպիրքն ՍԳ:
- 204-218 ՀԱՍԿ չունի խրատապիրները. ժողովուրդն] Դպիրքն:

- * Ժողովուրդն. Ամէն:
 * [Քահանայն]. Օրհնեալ Հոգիդ սուրբ...
 215 * Ժողովուրդն. Ամէն:
 * Քահանայն. Օրհնութիւն եւ փառք...
 * Եւ ժողովուրդքն զնոյն երկրորդեն զքահանայինն տսելով. Ամէն.
 Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ... (էջ 132-133):
 220 Եւ քահանայն դարձեալ խոնարհի եւ աղօթէ. Նայեա՛ց, Տէր մեր...
 (էջ 133):
 Եւ զայս ասացեալ՝ երկիր պաղանէ եւ համբուրէ զսեղանն եւ առեալ զսուրբ Մարմինն՝ ողջ թանայ յանապակ Արիւնն. եւ ասէ զաղօթս զայս. Տէր Աստուած մեր՝ ... եւ գոհութեամբ... Էւն (էջ 134-137):
 225 Եւ երկրպագեալ լարձրացուցանէ աղիներեւ ժողովրդեանն... Ի սուրբ Ի սուրբ... (էջ 137-138):
 (Սարկաւազն). Սաղմոս ասացէ՛ք տեառն Աստուծոյ... (էջ 139):

Մ Ա Ս Ն Զ Ո Ր Ր Ո Ր Դ

ԳՈՀՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆ

1. ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

- Եւ ապա սկսանի եկեղեցին եղանակել. Գրիստոս պատարագեալն:
 Իսկ քահանայն՝ մինչ նոքա երգեն՝ առնու զմարմինն ի ձեռն. եւ համբուրէ արտասուօք, եւ ասէ. Զո՞ր օրհնութիւն... (էջ 140):
 230 Դարձեալ ասէ. Խոստովանիմ...: Եւ բեկեալ արկանէ ի բաժակն տսելով. Լրումն Հոգւոյն սրբոյ: Եւ ապա խնդրէ ի տեառնէ պէսպէս հայցուածս անձինն եւ ժողովրդեանն եւ ամենայն աշխարհի՝ որչափ եւ կամի (էջ 141):

2. ՀԱՇԱԿՈՒՄ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԵՒ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ

- Եւ (քահանայն) յեա այնորիկ առեալ ճաշակէ տսելով. Մարմին
 235 քո... մեղաց: Եւ մինչդեռ նա զայս ասէ եւ զպիրքն պաշտեն, հրաման տա՛յ՝ ճաշակել այնոցիկ որք ի քահանայական կարգէն են (էջ 141):
 Իսկ սարկաւազն առեալ զսկիւնն սուրբ նուիրօքն՝ զառնայ առ ժո-

219 աղօթէ] եւ ասէ զայս ի ծածուկ Կ: Քահանայն ունիւ[ով] զնոյն (= հոգը) երկուս ի ձեռն՝ ասէ Լ:
 221 + երկրպագէ երիցս Կ: երկրպագէ զսեղանն Ս: ի սեղան Գ:
 224-225 + ժողովրդեանն եւ ասէ. Հայր սուրբ, որ կոչեցեր Գ: ասէ. Սուրբ Ի սուրբ Ս:
 227 եկեղեցին] Դպիրքն Կ: > եկեղեցին Լ: Ս եւ Գ ձեռնադիրները նախ կը զեն. Գոհանամ զԳէն Տէր, Գոհանամ զԳէն Քրիստոս, Սովիմք եւն, ապա Քրիստոս պատարագեալ:
 229 + ասէ ասելով Խոստովանիմ... ԼԱ:
 231 + Լրումն Հոգւոյն սրբոյ. Գ անգամ ասա. եւ ապա առեալ զմի մասն եւ գերկուսին ձեռն իւր,

տսելով ի ծածուկ արտասուօք եւ գոհութեամբ առ Հայր եւ Որդի. Հայր սուրբ... լման ասայ: Յովհաննու Ոսկերիքանին ասացեալ աւելորդ է. Կ:
 231-233 > եւ ապա ... կամի ՍԳՅ:
 231 + եւ ապա Տեառնագրէ զինքն եւ խնդրէ... աշխարհի եւ խնդրէ քողութիւն իւրոյ յանգանաց, քշմամեաց եւ ատելեաց Կ:
 234 եւ անդէն ահիւ եւ դողութեամբ ճաշակեցէ ի բաժակէն տսելով. Մարմին քո... Կ:
 234-236 > եւ քահանայ ... կարգէն են ՍԳՅ:
 237-238 Եթէ սարկաւազն կայ (զայ՞) հաղորդեցի եւ նա. առնու սարկաւազն զսկիւնն եւ զառնայ զէպ ի ժողովուրդն տսելով. Երկիրդ... Կ:

- ղովուրդն տսելով. Երկիրդ եւ հաւատով յառաջ մատիք (էջ 142):
 Եւ զպիրքն երգեն լարձր ճայնիւ. Աստուած մեր եւ Տէր մեր...
 240 Քահանայն զայ զկնի սարկաւազին. եւ խաչակնքէ զժողովուրդն տսելով. Կեցո զժողովուրդս քո...: Եւ հաղորդէ քահանայն զարժանաւորան:
 Եւ զպիրքն երգեն զերգս: Եւ որչափ յամէ քահանայն ի ճաշակումն՝ զպիրքն այնքան երկարեցեն զերգսն...: Եւ զպիրքն երգեն. Լցա՛ք ի բարութեանց քոց... (էջ 144):
 245

3. ԳՈՀՈՒԹԵԱՆ ԵՐԳ, ԱՂՕԹՔ

- Լուսնայ քահանայն զձեռն:
 Եւ սարկաւազն՝ մինչ նոքա երգեն՝ խոնկ արկանէ չուրջ զսեղանովն. եւ առեալ զսպասս՝ տանի ի սարկաւազարանն. եւ եկեալ հրամայէ ժողովրդեանն զոհանալ այսպէս. Եւ եւս խաղաղութեան... եւ
 250 եւս հաւատով ընկալեալ... (էջ 145):
 Աղօթք. Գոհանամք զԳէն, Քրիստոս Աստուած մեր... Խաղաղութիւն ամենեցուն... Անգին... (146-147):

4. ԱՐՁԱԿՈՒՄԻ ԱՂՕԹՔ, ՄԱՍԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՒ ԵՐԳ

- Եթէ Եպիսկոպոս իցէ պատարագիչն, ի սոյն ժամու զգենու զեմի-
 255 փորոնն. եւ զայ ի մէջ եկեղեցւոյն: Աղօթք. Որ օրհնես զայնսիկ...
 (էջ 147-149):
 Զի՞նչ այժմ եկեղեցւոյ ասելն. Եղիցի անուն Տեառն օրհնեալ...
 Եւ քահանայն զառնայ եւ ասէ ի վերայ սոցա. Կատարումն օրի-
 նաց... (էջ 150):
 Եւ բերեն նշխար առ քահանայն. եւ սա օրհնեալ՝ բաշխէ ժողովրդ-
 260 դեանն:
 Եւ ասեն սաղմոս. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ եւ այլն:
 Եւ քահանայն խաչակնքելով զժողովուրդն ասէ. Օրհնեալք եղբրուք
 եւ այլն:
 Եւ ապա Ի Տէր պարծեցի. զիտին լրման տսելով (էջ 151):

239 Դպիրքն] ժողովուրդն Վ:

239-241 ~ Քահանայն... Կեցո զժողովուրդս քո: ժողովուրդն համարձեալ զձեռն միարան տսեն. Աստուած մեր... ԼԱ: + զժողովուրդս քո... եւ հաղորդեցի նոր ձեռնադրեալն, ապա ոչ ի բերան, այլ յափն տալով զսրբութիւնն Կ: > եւ զպիրքն... զժողովուրդս քո ՍԳՅ:
 241 ~ ... յեա հաղորդելոյն խաչակնքէ զժողովուրդն եւ ասէ լարձր. Կեցո, Տէր, ... Կ:
 243-244 > եւ զպիրքն ... զերգսն ՍԳՅ:
 248 Սարկաւազարանն] խորհրդարանն Կ:

250 + Ընկալեալ... Դպիրքն՝ Գոհանամ զԳէն, Տէր, ... եւ քահանայն ընդ նմին ասէ ի ծածուկ զաղօթս. Գոհանամք զԳէն, Հայր ամենալալ... Գոհանամք զԳէն, Քրիստոս քաղաղ... Գոհ. զԳէն, Հոգիդ նշմարիտ... Սովիմք պահեալ... Կ:

251 ՍԳՅ ձեռնադիրները ունին խրատագիրներ, այլ միայն մեկնութիւններ քարտեզներուն եւ աղօթքներուն:

253-254 + զեմիփորոնն պատույ ՍԳ: > Ե: Եկեղեցւոյ] ժողովուրդն տսեն զ անգամ Կ: Եկեղեցւոյն] զպիրքն ՀԱՍԿ:

256-260] Ե:
 258 ~ Կատարումն օրհնաց... եւ ժողովուրդն տսեն. Ամէն. Օրհնեցից... եւ բնդ ասեն՝ բաշխի նշխար ժողովրդեանն. աւարամանն՝ Փառք Հօր... Եւ քահանայն խաչակնքէ ի վերայ ժողովրդեանն տսելով. Օրհնեալ եղբրուք... ժողովուրդն ասէ. Ամէն: + եւ քահանայն դառնայ յարեւելս, երկրպագէ առաջի սեղանոյն երիցս եւ երբայ խաղաղութեամբ: Կ:

261 ասեն] զպիրքն ՀԱՍԿ:
 264 ապա] զպիրքն ՀԱՍԿ:

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԽՐԱՏԱԳԻՐՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԺԳ. Ղարու Ս. Պատարազի կառույց-
ուածքը աւելի լաւ հասկնալու համար, ա-
ռանձին առանձին նկատենք սուրբ սեղա-
նի պաշտօնեաներուն եւ սուրբ պատարա-
զի արարողութեան ներկայ ժողովուրդին
բոլոր աղօթքներն ու ներդրածական մաս-
նակցութիւնը, զոր խրատապիրները կը
յանձնարարեն իւրաքանչիւր դասակար-
գին:

Ա.

ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ա. - ԲԱՆԱՆԱՆԵՐՈՒ ԴԵՐԸ

Ա) Քահանաներու աղօթքները

1. Պարտք ունին քահանաները, պատա-
րազը չսկսած՝ խոստովանանք ըլլալու:

2. Իրենց երկրորդ աղօթքը - եթէ չնկա-
տենք պատարազի զգեստները հաղուելու
միջոց ըսուելիք աղօթքները, զոր Արճ.ն
անտեսած ըլլալ կը թուի - Դաւթի սաղ-
մոսն է՝ ՅԻՇԵԱ ՏԷՐ ԶԴԱԻԹ...:

3. ՈՐ ԶԳԵՅՅԵԱԼ ԵՍ ԵՎ ԱՄԵՆԱԿԱԼ Աս-
տուած տակաւին պատրաստական աղօթք-
ներ են:

4. «Աղօթից հպատակ» քահանան ՅԱ-
ՂԱԳՍ ՅԻՇԱՏԱԿԻ աղօթքէն վերջ, Ոսկե-
րեանի աղօթքն է որ կ'ըսէ. ՏԷՐ ԱՍ-
ՏՈՒԱԾ ՄԵՐ: Ապա ԽՈՒՆԿ ՄԱՏՈՒՅԱ-
ՆԵՄՔ աղօթքը կը յաջորդէ:

Ուստի զորս կը թողուն ԵՒ ՎԱՍՆ
ՍՐԲՈՒՀԻՈՅԷՆ մինչեւ ի ՅԱՐԿԻ ՍՐԲՈՒ-
ԹԵԱՆ աղօթքները որոնք ԺԳ. Ղարէն ետք
մտած են պատարազի աղօթքներուն մէջ:

5. ՕՐՀՆԵԱԼ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆ ա-
ղօթքը կարելի է պատարազի սկիզբի ա-
ղօթքը նկատել, որ խնկարկուծենէ վերջը
կու գայ:

6. Առ հասարակ քահանային աղօթքնե-
րը չեն տարբերի աշօրուան պատարազի
աղօթքներէն. թուով նոյնքան են. միայն
թէ աշօրուան հանդիսաւոր պատարազի

միջոց, սարկաւազին յաճախելի ՕՐՀՆԵԱ
ՏԷՐ-երով կ'ընդհատուին վերջաւորու-
թիւնները, որոնք կ'երգուին քահանայէն:

7. Պատարազի վերջաւորութեան, Ար-
ճիչեցին չունի Յ. Ոսկերեանի ՀԱՅՐ
ՍՈՒՐԲ ԳՈՀԱՆԱՄ ԶԳԷՆ ԵՎ ԳՈՀԱՆԱՄ
ԵՒ ՄԵԾԱՅՈՒՅԱՆԵՄ աղօթքները. կը
պակսին հաւասարապէս ԳՈՀԱՆԱՄ ԶԳԷՆ
ՀԱՅՐ, ... ՔՐԻՍՏՈՍ, ... ՀՈԳԻԴ ա-
ղօթքները:

8. Վերջին աղօթքներն են. ԿԱՏԱՐՈՒ-
ՄԸՆ ՕՐԻՆԱՅ ԵՎ ՕՐՀՆԵԱԼՔ ԵՂԵՐՈՒՔ
մաղթանքները: Զիպ վերջին Աւետարան:

Բ) Քահանաներու արարողական գործերը

Ասոնք կարեւոր են Արճիչեցիին հա-
մաձայն, որովհետեւ սուրբ պատարազի
խորհրդակատարութիւնը անոնց կատա-
րած արարողութիւններովն է որ խկապէս
ի զուլ կը հանուի: Քահանան կը ներ-
կայացնէ Քրիստոսը, ուստի ասոր համար
կը վայելէ սպասաւորներու պատիւը եւ
ամէն տեսակ ծառայութիւն:

1. Խոստովանանքէ վերջ, առաջին դու-
րը կ'ըլլայ քահանային «ընտանեար» խո-
սիլ Քրիստոսի հետ:

2. Զգեստաւորութիւն վերջ, խորանին
առջեւ կու գայ եւ «արտասուօք» կ'աղօթէ
Ս. Հոգւոյն՝ ԱՄԵՆԱԿԱԼ ԱՍՏՈՒԱԾ:

3. Յետոյ կ'անցնի նուէրները պատրաս-
տելու: Ինք անձամբ կը զնէ հացը՝ մաղդ-
մային, եւ զինն՝ սկիւհին մէջ: Այս «զնե-
լու» մէջ կը նկատուի քահանայական աս-
տիճանի ամէնէն աւելի բարձր եւ յատկա-
նշական դորձը. Աստուծոյ առջեւ դնելով
կը կատարուի նուիրագործութիւնը: Այլ
նիւթական դորձեր կատարելը սարկաւա-
զին կ'իյնայ. բանալ եւ ծածկել: Զիջանե-
լով է միայն որ կը «ծխէ ամենայն լրման
եկեղեցւոյ, մինչեւ ցլեաին ժողովուրդն»:

4. Խորան ելլելէն վերջ, ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ
ՄԵՐ ԿԵՅՈ ԶԺՈՂՈՎՈՒՐԴՍ աղօթքը «սա-
կաւ ինչ ի բացեայ կացեալ ի սեղանոյն»
կը կատարէ:

Այս շարժումը աշօր չի կատարեր քա-
հանան, ինչպէս նաեւ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ

ՄԵՐ ՈՐ ԿԱՐԳԵՅՆԵՐ աղօթքի միջոց, «ե-
րկայ» երկրպագութիւն չ'ընեն, հակառակ
Արճիչեցիին խրատապիրին:

5. Քահանան բոլոր աղօթքները «ի ծա-
ծուկ» կ'ըսէ եւ կ'երկրպագէ սեղանին
նախ քան զա՛հ կամ աթոռ բաղմիլը Աւե-
տարանէն առաջ, եւ ուր կը մնայ մինչեւ
ՀԱՒԱՏԱՄՔԻ վերջաւորութիւնը: Աթո-
ռին վրայ նստած կ'ընդունի սարկաւազի
ձեռքէն Աւետարանը. «Եւ Ղարձեալ խո-
նարհի սարկաւազն եւ առնու»: «Ի խո-
րանէն առ ժողովուրդ» կը դառնայ օրհ-
նելու համար:

6. Վերաբերումէն առաջ, եպիսկոպոսը
պէտք է եմփոքորնը հանէ, որովհետեւ
ծառայի դերը պիտի կատարէ անկէ ետ-
քը. խորհուրդը Քրիստոս է որ կը կատա-
րէ, քահանան անոր լոկ մատակարարն է:
Վերաբերումէն վերջ՝ ոչ թէ Քրիստոսի,
այլ Հօր Աստուծոյ կ'աղօթէ:

7. Վերաբերումէն առաջ, հրաման կու
տայ երախաներուն՝ որ ելլեն:

8. Արճիչեցիին մեկնութեան ամէնէն
զեղեցիկ մասը վերաբերումն է, ուր շատ
ուշադրութեամբ կը բացատրէ ամէն մէկ
կատարուած շարժումէն ու մատուցուած
աղօթքին իմաստը:

9. Վերաբերումէն վերջ քահանան շար-
ժումներու մասին հրահանգ չունի խրա-
տապիրներէն: Զեռք կ'առնէ սրբազորձը-
ւած նշխարը եւ կը նուիրէ «եղեալ... ի
վերայ սեղանոյ». եւ այնու կ'ընդունի
Հայր Աստուած «զնուէրն զոր ետուն ի
ձեռս միջնորդին իւրեանց» - ժողովուր-
դը՝ քահանային:

10. Ապա բաղկատարած է քահանան
մինչեւ ԵՐԿՐՊԱԳԵՄՔ աղօթքը՝ որով կը
կատարէ Հոգւոյն սրբոյ կոչումը, որուն
միջոց՝ խոնարհած կը մնայ: Նուէրներու
վրայ խաչակնքման թիւը անստոյգ է:

11. Դարձեալ կը խոնարհի ՈՐ ԱՂ-
ԲԻԻՐԴ ԵՍԻ միջոց: Նշխարին եւ բաժա-
կին բարձրացումէն յետոյ՝ անգամ մըն ալ
միտաին կը բարձրացնէ, կարծես, նուէր-
ները, բայց չի յիշեր զէպի ժողովուրդ
դառնալը՝ ի ՍՈՒՐԲ ի ՍՈՒՐԲԻ տուն:

12. Եպիսկոպոսը իր ճաշակումէն ետք,
կը հրաւիրէ քահանաները եւ արժանաւոր-
ները՝ հաղորդութեան: Յետոյ կը զգես-
տաւորուի: Վերջին օրհնութիւնը տալէն
առաջ կը բաշխէ մասը՝ մասնակից ժողո-
վուրդին:

Բ. - ՍԱՐԿԱՒԱԳՆԵՐՈՒ ԴԵՐԸ

Աղօթքներ ըսելը միայն քահանային
կ'իյնայ: Իսկ «հպատակութիւն սպասա-
ւորութեան մարմնական նշանակացն կա-
տարէ սարկաւազն, առնելը նորին հա-
մարձակարար. զծածկելն եւ զրանալն,
զածելն եւ տանելն, եւ զորս ի նոյնս յա-
րին դորձ» (էջ 44):

Արդ, սարկաւազներու մաքմաւորական
հպատակութեան մասն է քահանային ա-
ղօթքները մասամբ ամբողջացնել: Ար-
դարեւ, սարկաւազները

1. Քահանային կ'աղարարեն օրհնելու
ժողովուրդը՝ ՕՐՀՆԵԱ ՏԷՐերով, որոնց
թիւը չորսը չ'անցնիր:

2. Ժողովուրդին հետ կ'աղօթեն ԵԿԵ-
զեցւոյ եւ աշխարհիս խաղաղութեան ու
զանազան կարօտութեանց համար, երեք
չորս ընդհատումներով. ԵՒ ԵՒՍ ԽԱՂԱ-
ՂՈՒԹԵԱՆ... ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ...
ԵՒ ԵՒՍ ՀԱՒԱՏՈՎ... ԱՄԵՆԱՅՆ ՍԸՐ-
ԲՈՎՔ... ԵՆ...:

3. Ժողովուրդին կը սորվեցնեն քարոզ-
ներով, նախ Պատարազի առաջին մասին
մէջ (ԽՆԴՐԵՍՅՈՒՔ... ԶՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ
ԶԵՆՈՐՀՍ... ԵՐԿԻԻՂԱԾՈՒԹԵԱՄԻ ԼԸ-
ԻԱՐՈՒՔ... ՕՐԹԻԻ... ՊԹՕՍԽՈՒՄԷ...
ՈՐ ԵՐԱԽԱՅՔԴ ԷՔՔ ԵԼԷՔ). ապա Հաւա-
տացելոց Պատարազին մէջ յորդորներով
կը խանդավառեն անոնց հոգիները (ՈՂ-
ԶՈՅՆ ՏՈՒՔ... ի ՎԵՐ ԸՆԾԱՅԵՅՈՒ-
ՅԷՔ). հուսկ կը հրամայեն Ս. Հաղորդու-
թեան մօտենալ (ԵՐԿԻԻՂԻԻ ԵՒ ՀԱՒԱ-
ՏՈՎ):

4. Բացի ժողովուրդը երկրպագութեան,
աղաչանքի, շնորհակալութեան յորդորե-
լէ, բացառաբար, զպիւրներուն ալ կ'աղ-
դարարեն՝ Սաղմոս երգելու, Հաւատացե-
լոց Պատարազին սկիզբն ու վերջաւորու-

թեան, ինչպէս նաեւ կը յանձնարարեն զգուշութեամբ պահպանել դռները:

Արարողութեանց մէջ, տակաւին, չտա կարեւոր դեր կը մնայ սարկաւազին:

1. Պատարագին սկզբնաւորութեան, մինչ միւս սպասաւորները աւանդատան մէջ կը զգեստաւորուին, կը պատրաստեն հացն ու գինին:

2. Ընծայարանի խորանին քով՝ քահանային կը «մատուցանէ» նշխարը. կը ծածկէ նուէրները եւ խուսկ կու տայ քահանային:

3. Սարկաւազները թուով մէկէն աւելի ըլլալու են. Աւագ սարկաւազէն զատ, որ նախասարկաւագ կը կոչուի, ուրիշներ ալ կան, որոնք օրինակի համար Աւետարանը կը բարձրացնեն ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ երգի միջոց: Յոգնակի թուով կը յիշուին եւ ի իմ իմացութեան հարցումները: Անոնցմէ մէկը կը տանի Աւետարանը՝ բազմած քահանային, ապա կ'առնէ անոր ձեռքէն: Յետոյ բռնած Աւետարանը, խուսկով — մոմով բեմին դուռը կու դայ Օրթիւ երգելու:

ՍՐԲՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԵՆՈՒՍԻ քահանային կամ սարկաւազին ըսել կու տայ: Անորոշ կը մնայ նոյնպէս ԸՆԹԵՆՈՒՆ ԶԱՒԵՏԱՐԱՆԵՆ բացատրութիւնը:

4. Վերաբերումի արարողութեան՝ չտա մը սարկաւազներ ալ կը մասնակցին:

5. Զեռք լուսէն եւ ԱՐԺԱՆ ԵՒ ԻՐԱՒԷՆ ետք՝ կը դադրի սարկաւազին քարոզելու պաշտօնը մինչեւ եւ ՉԲՈՅՍ Ի ՔՈՅՈՅ աղօթքը, որով կը վերջանան քահանային հաշտարարական աղօթքները:

6. Մինչեւ հաղորդութեան արարողութիւնը, փոփոխութիւն կրած չէ սարկաւազին դերը, եւ նոյն մնացեալ է մեր այսօրուան պատարագին մէջ վարած դերին հետ:

Հաղորդութեան բաշխումը, այսօր, սարկաւազին չ'իյնար. չկայ այժմ նաեւ խնկարկութիւն սեղանի, հաղորդութենէ ետքը:

Գ. — ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳՆԵՐՈՒ ԴԵՐԸ

1. Զգեստաւորման տունը պէտք են հաղուելի գօտելոյժ պատմութեան եւ իրենց բազմակի զգուշութեամբ պահպանել:

2. Իրենք են քահանային սպասաւորները. իրենց կ'իյնայ քահանաները հաղուելի:

3. Երախտները դուրս հանելու պաշտօնն ալ իրենց կը վերադրուի:

4. Հաւանարար, վերաբերումի ալ կը մասնակցին: Ուրիշ առիթներու չեն յիշուիր իրենց անունները. դեռեւս սարկաւազներու քով կենան՝ եկեղեցւոյ մէջ:

Գ. — ԳՊԻՐՆԵՐՈՒ ԴԵՐԸ

Սաղմոսերգուներ, Գրակարդացի, Ընթերցող գուցէ միեւնոյն աստիճանի ըստ պատմութեան ըլլան դպիրներուն հետ:

Բայց սաղմոսերգու պաշտօնեային կ'իյնայ Աւետարանէն առաջ Ալիւիւիան սկսիլ երգով — ապա թիւ ըսել որոշուած սաղմոսը:

Ընթերցողը յիշուած է Աւետարան կարգաւորման առաջ. ան կը կարգայ նախ մարդարէական, ապա առաքելական դիրքը:

Գրակարդացի անունը մէկ անգամ միայն կը յիշուի, պատարագին սկիզբը. «... եւ գրակարդացին պատմութեան գօտելոյժ զգեցին միայն». մի եւ նոյն այս հրահանգը գալիւններուն համար ալ կը դուրս անշուշտ, որովհետեւ անոնց համար ուրիշ բան չ'որոշուիր:

Ամէն անգամ դանդաղանութիւն չկայ դրօշներու դերը սահմանելուն մէջ: Փոխի ի փոխ կը դործածէ դպիրն, դպիրքն եւ պաշտօնեայի բացատրութիւնները:

1. ՅԻՇԵԱ ՏԷՐ ԶԴԱԻԹՐ Հաւանարար գալիւնները կ'ըսեն:

2. Պաշտօնեայի կ'երգեն Շարական խնկոցը:

3. Ժամամուտը:

4. Սաղմոսը եւ Շարականը՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԷՆ առաջ:

5. Աւետարան կարգաւորման առաջ, խնկարկելու եւ մոմակիր պաշտօնեաները Սար-

կաւազին հետ կը բերեն Աւետարանը բեմին դրան առջեւ, ու հոն կը կարգան:

6. Ապա գալիւններու պարտքն է երգել ՄԱՐՄԻՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ, ՍՐԲԱՍԱՅՈՒԹԻՆԸ, ՅԱՐԵՒԻԹԻ ԵՂԱՐԸ եւ ՈՐԲ ԶԲԵՐՈՎԵԼԻՅԸ:

7. Զեռագրիւնները իրարու չեն համաձայնի՝ գալիւններու թէ ժողովուրդին ըսել տալուն մէջ ՊԱՏԱՐԱԳ ՔՐԻՍՏՈՍ ՄԱՏԶԻ ԳԱՌՆ ԱՍՏՈՒԹՈՅ, ԵՒ ԸՆԴ ԶՈԳԻՈՅԻ ՔՈՒՄ, ՈՒՆԻՄՔ ԱՌՔԵԶ, եւ ԱՐԺԱՆ ԵՒ ԻՐԱՒԱ պատասխանները:

8. ՅԱՄԵՆԱՅՆԻ երգը երգողներուն առաջ չի տրուիր տղապարտութեան մէջ:

9. ՀԱՅՐ ՄԵՐԸ եւ անկէ առաջ եկող եւ ԸՆԴ ԶՈԳԻՈՅԻ ՔՈՒՄ պատասխանը դրօշներուն կ'իյնայ:

10. ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼԸ նոյնպէս գալիւնները կ'երգեն, ինչպէս կը հասկցուի երկու խրատագրիւններու բաղդատութենէն:

11. Դպիրներուն վերջին երգելիք երգը նշանակուած է ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ԵՒ ՏԷՐ ՄԵՐ, եւ ապա հաղորդութեան միջոց երգելիք երգերը. ԼՅԱՔ Ի ԲԱՐՈՒԹԵԱՆՅ ՔՈՅ. եւ հուսկ, նշխար բերելու եւ բաշխելու տուն ՕՐՀԵՅՅԻՅ ԶՏԷՐ կ'ըսուի, եւ Ի ՏԷՐ ՊԱՐԾԵՍՅԻՈՎ կ'աւարտեն իրենց մասը:

Բ.

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՆԸ

Պատարագին մասնակցողներուն մօտէնէն յետին դասը ժողովուրդին դասն է, որուն սակայն պատուի որոշ բարձրութիւն կու տայ Արճիւնցին, ինչպէս կրնանք հասու ըլլալ այս կարճ բացատրութեամբ՝ «եւ ժողովուրդը որ ի նմա, հաւասար հրեշտակաց»:

Եղբայր, ամենայն եկեղեցի, եկեղեցին, ժողովուրդ, ժողովուրդքն, կը կոչուին պատարագի ներկայ հաւատացեալները:

Ասոնք արարողութեան բնաւ նիւթական օժանդակութեամբ չեն մասնակցիր, այլ

միայն աղօթքներով կը միանան պատարագին:

1. Սարկաւազին առաջին իսկ ԽՆԴՐԵՍՅՈՒՔԻՆ անմիջապէս կը պատասխանեն անոնք, ԿԵՅՈ ՏԷՐՈՎ:

2. Ժողովուրդին առաջին երգը ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ է:

3. Սարկաւազին քարոզներուն իրենք են որ կը պատասխանեն ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ:

4. Ժողովուրդը, պաշտօնեաներու դասին հետ կը կրկնեն, երգելով, Սաղմոս երգուին ԱԼԵԼՈՒԻԱՆ, զոր սաղմոսէն վերջ անգամ մըն ալ կ'երգեն:

5. Աւետարանէն առաջ՝ ԵՒ ԸՆԴ ԶՈԳԻՈՅԻ ՔՈՒՄ, ՓԱՌՔ ՔԵԶ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ, ԱՍԷ ՕԹԷՈՍ, իսկ Աւետարանէն ետք՝ ՓԱՌՔ ՔԵԶ, ԱՍՏՈՒԱԾ, Ժողովուրդին կ'իյնայ:

6. Յայտնի չէ թէ «ասան գնիկիականն դաւանութիւն ի լրման», Ժողովուրդին համար ալ ըլլայ:

7. ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ ՔՈՎԷՆ առաջ՝ ԱՄԷՆ, ԵՒ ԸՆԴ ԶՈԳԻՈՅԻ ՔՈՒՄ, ԱՌԱՋԻ ՔՈ ՏԷՐ, ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ ՔՈՎԷՆ ետք՝ երկու ԱՄԷՆները ժողովուրդը կ'ըսէ:

8. ՈՂՋՈՅՆ ՏՈՒՔԷՆ սկսեալ մինչեւ ԱՌԷՔ ԿԵՐԱՅՔԻՆ վերջը, ժողովուրդը ձայն չունի — ըստ Արճիւնցիի 1830ի հրատարակութեան: Հոգւոյն սրբոյ կոչումէն առաջ եկող ԽԱՂԱՂՈՒԹԻՆ ԱՄԵՆԵՅՈՒՆԻՆ՝ ԵՒ ԸՆԴ ԶՈԳԻՈՅԻ ՔՈՒՄ, ԱՌԱՋԻ ՔՈ ՏԷՐ պատասխանները ժողովուրդը կու տայ:

9. Նոյնպէս սուղ դադարէ մը յետոյ, ՀԱՅՐ ՄԵՐԷՆ ետք տրուած ԽԱՂԱՂՈՒԹԻՆ ԱՄԵՆԵՅՈՒՆԻՆ՝ ժողովուրդը կը պատասխանէ. ԵՒ ԸՆԴ ԶՈԳԻՈՅԻ ՔՈՒՄ:

10. Քահանային հետ ժողովուրդն ալ կը խոնարհի. ապա «աղագական» ՄԻԱՅՆ ՍՈՒՐԲ, ՄԻԱՅՆ ՏԷՐ: Երեք ԱՄԷՆներէն ետք ժողովուրդը կ'երգէ. ԱՄԷՆ ՀԱՅՐ ՍՈՒՐԲԸ:

11. Պատարագի մասնակցութեան երկու վերջին աղօթքները կ'ըլլան ժողովուրդին

Համար. ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ՏԵԱՌՆ ԵՆ ՕՐՀ-
ՆԵՑԻՑ ԶՏԷՐ. Իսկ քանի որ անորոշ են
խրատադիրները վերջապետութեան՝ դու-
ցէ նաեւ ի ՏԷՐ ՊԱՐԾԵՍՑԻՆ ալ միասին
կ'ըսեն՝ պաշտօնեաներուն հետ:

Ամփոփոյքէս կը տեսնուի, քիչ մ'աւելի
յայտնի կերպով, թէ որքան կշռադատ բա-
ժանում եղած էր ԺԳ. դարու պատարադի
արարողութեան աղօթքներու եւ շարժու-
ձեւերուն, սպասաւորներու եւ ժողովուրդ-
դին ունեցած մասերուն մէջ: Մանաւանդ
ժողովուրդին տրուած կարճ աղօթքները
չառ կը դիւրացնէին անոնց մասնակցու-
թիւնը Գերադոյն Զոհին խորհրդակա-
տարման. եւ միանգամայն աւելի ուշա-
դրութեամբ եւ եռանդեամբ կրնային հե-
տեւիլ պատարադի ընթացքին:

Աւստոս որ նոյն իսկ ձեռագիրներէն մի
քանի հատը, ժողովուրդին ինկած այն
պատասխաններէն շատերը դպիրներուն
սեւ կու տան, այնպէս որ Փառէն Սրբա-
ղանի հրատարակած ուսումնասիրութեան
մէջ պորձածուած Արճիշեցիի տպագրու-
թիւնը բոլորովին զուրկ է ժողովուրդի
մասերէն:

Ի՞նչ լաւ պիտի ըլլար եթէ ապագային
կարենայինք կրկին ժողովուրդին վերա-
դարձնել անոնց յարմար մասերը, որպէս
զի աւելի արդիւնաւոր կերպով կարենա-
յին հետեւիլ սուրբ պատարադի հոգեպա-
րար արարողութեան:

(Վերջ)

Հ. ՂՈՒԿԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

ԳՈՎՔ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Կ'ուզե՞ս ըմպել
Առուակներէն, ծաղիկներէն,
Այգաբացի ցայթաղբիրէն
Գարունի խանդն ու խայտանք...
Օ՛ն, մօտեցո՛ւր բաժակի պէս,
Շրթունքներուդ ծաբան անձուն,
Որպէս աղբիւր ու վարդի բոյր,
Սա Մանուկի այտերուն:

Կ'ուզե՞ս տեսնել
Սա երկնքի նայուածքը ջինջ,
Ազամանդի շողիւմն ամբիծ,
Ցատակը լուրժ լինքերուն.
Օ՛ն, սեւեռէ՛ նետն աչքերուդ,
Կարօտանքի նրման քրքուն,
Երազի պէս լուռ, հոգեգրաւ,
Սա Մանուկի աչքերուն:

Կ'ուզե՞ս վառել
Ամմեղութեան բոցով պայծառ
Ու հրմուսնքի շողերով վառ
Ջահը շէնշող քու տունիդ...
Օ՛ն, պինդ գրկէ՛ կուրծքիդ վըրայ,
Որպէս Սիրոյ Արեւ փառփուն,
Որպէս երկինք աստեղավառ,
Սա Մանուկի Սիրուն անհուն:

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

ՇՈՒՇԱՆ ՎԱՐԳԵՆԻ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՎ

(Թուական 460-473, Դեկտեմբեր 14)

Գրեց Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆԵՍԵԱՆ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1963, ք. 4-8, էջ 137)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐԻ

Շուշանիկ - Դուստր վարդան Մամիկո-
նեանի եւ կին Վաղդէնի
Վաղգէն - Բդեշխ Գուգարքի
Սողոմէ - Նաժիշտ եւ մտերիմ Շուշանիկի
Ջուջիկ - Եղբայր Վաղդէնի, հիւանդոտ եւ
տկարակալ
Օհան - Եպիսկոպոս Յուրտաւ քաղաքի
Վաչէ - Որդի Շուշանիկի (չառ փոքր)
Ջարուհի - Դասընկեր Շուշանիկի
Սիրուշ - Դասընկեր Շուշանիկի
Պողտան - Դահապետ Վաղդէնի
Երկու քրմուհիներ
Երկու մանկալարիկներ

Տեսարանը կը ներկայացնէ շփեղ պալա-
տի մը դահլիճը. բազմոցներ, քիկնաքոռ-
ներ, գորգ եւ սեղան մը: Անկիւնները
շահեր: Պատէն կախուած են գէմքեր եւ
անասունի կմախքներ: Մէկ անկիւնը՝ Տի-
րամօր պատկեր մը: Երկու մանկալարիկ-
ներ կանգնած են մէկ մէկ անկիւն:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Շուշանիկ առանձին

Շուշանիկ - (Միմակը, գետնի վրայ
ձնբաղիր, ձեռնամաձ, Տիրամօր պատկե-
րին առջեւ բարձրաձայն հեկեկալով կ'ա-

ղօթէ) Ո՛վ Մայր սիրելի, քու խաչուած
Որդիկդ սիրոյն Համար՝ ընդունէ՛ իմ ար-
տասուալից աղօթքս. փրկէ՛ իմ զաւակ-
ներս ուրացութեան սեւ անունէն: Ա՛ն ա-
նոնց հոգիները, ես կ'արեմ փոքրիկ պա-
տանքները, քան զեւերուն զոհուին:

Քիչ ատենէն Վաղդէն կը հասնի՝ Յուգա-
յի պէս համբուրելով զիս մատներու: Լոկ
դուն կը հասնինս մօր մը վիշտերը: Այն-
պէս կ'արտասուեմ, ինչպէս Խաչին տակ
դուն լացիր: Օղնէ՛ ինծի, օղնէ՛ ինծի...:

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Սողոմէ եւ Շուշանիկ

Սողոմէ - (Ներս՝ գալով) Ամբողջ դիշերն
արցունքով անցուցիր. ելի՛ր, պատառ մը
հաց կեր եւ դորացիր:

Շուշանիկ - Ա՛հ, Սողոմէ՛, Սողոմէ՛. ես
իմ զաւակներս կ'ուզեմ, զաւակներս (չատ
ցաւագին. ապա ոտքի ելլելով կը կանգնի
եւ ուժգին շեշտ անաձ) Վաղդէն, զաւակ-
ներս քեզմէ կ'ուզեմ: Դուն չես ճանչնար
վարդանի աղջիկը: Կը մեռնի, բայց չի
ձուր:

Սողոմէ - Տիրուհիս յուսահատելու չէ.
ես յատահ եմ որ իշխանները պիտի դի-
մադրեն իրենց հօրը. քեզ աւելի կը սի-
րեն՝ քան թէ զինքը:

Շուշանիկ - Շա՛տ փոքր են, Սողոմէ՛.